

Ն. Գ. ԲԵՒԼԱՐՅԱՆ

2. ԴԱՐՎԻՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՆԱԴԻՐ

XIX դարի երկրորդ կեսին առաջին անգամ մատերիալիզմի դիրքերից գիտականորեն լուսարանվեց օրգանական աշխարհի բազմազանությունը և նպատակահարմարությունը պրոբլեմը: Դրանով իսկ խարխվեց բիոլոգիայում իդեալիզմի, միստիկայի և թեղեկոգիայի օջախը:

Գիտությունը այդ մեծ ծառայությունը մատուցեց Դարվինը իր «Տեսակների ծագումը բնական ընտրության ճանապարհով» աշխատությամբ: Վերջինիս հանդես գալու հետ միասին էվոլյուցիոն տեսությունը դարձավ երկրի վրա օրգանական բնության ծագումը բացատրող անխախտելի սկզբունք:

Հսկայական քանակությամբ փաստերով հիմնավորված՝ Դարվինի ուսմունքը հաստատեց հավիտենական շարժմամբ և փոփոխականությամբ իրականացող միլիոնավոր տարիների պատմական պրոցեսի առկայությունը:

Դարվինի ուսմունքը, որը հիմք դրեց գիտական բիոլոգիային, հանդիսացավ մի կողմից՝ իրեն նախորդող գիտության դարգացման, մյուս կողմից՝ դարգացող կապիտալիզմի ազդեցության արդյունք: Նրա հիմնական բովանդակությունը անընդհատ գործող ընտրությունն է՝ համապատասխան բնական և արհեստական պայմաններում: Նա բացատրում է, ինչպե՞ս բուսական և կենդանական աշխարհներում անսահման բազմազանությունից միշտ առաջացող նոր հատկություններից ու հատկանիշներից ամրանում և կատարելագործվում են միայն նրանք, որոնք օգնում են օրգանիզմին դարգանալու և գոյություն ունենալու տվյալ պայմաններում:

Դարվինի ուսմունքին հիմք ծառայեց մարդու կողմից բույսերի և կենդանիների վերափոխման բազմադարյան պրակտիկան: Դրա օգնությամբ նա հայտնաբերեց բնության գաղանիքների բանալին:

Էվոլյուցիոն տեսությամբ մշակմանը մոտենալով ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի ուսումնասիրությունից, Դարվինը կարողացավ բացահայտել ընտրության ստեղծագործական դերը հատկանիշների կուտակման գործում և ժխտել այդ կապակցությամբ մետաֆիզիկների բերած բոլոր «ապացույցները»:

Մեծ բնագետը բազմաթիվ փաստերով ապացուցեց, որ յուրաքանչյուր կուլտուրական տեսակ իր բոլոր ժամանակակից սորտերով կամ ցեղերով առաջացել է մեկ կամ մի քանի վայրի տեսակներից: Կուլտուրական ալյատեսակների գոյություն ունեցող բազմազանությունը համարվում է բազմաթիվ մարդկային սերունդների աշխատանքի արդյունք:

Դարվինը հայտնաբերեց մարդու կողմից օրգանիզմների բնույթի վերափոխման պրոցեսի հիմնական օրինաչափությունները: Նա գտավ, որ ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի էվոլյուցիայում վճռական դեր

խաղում են երեք դորժոն՝ փոփոխականություն, ժառանգականություն և արհեստական բնորություն:

Դարվինը հաստատեց, որ փոփոխականությունը համարվում է էվոլյուցիայի աղբյուր, քանի որ նա առաջադրում է նյութ արտաքին պայմաններին օրգանիզմների լավագույն հարմարվողականությունը ապահովող փոփոխությունների կուտակման և ընտրության համար: Նրա պատկերացումները փոփոխականության պատճառների մասին, համեմատած նախորդների հետ, չափ խորն են և բազմակողմանի: Այս հարցում նա կանգնած էր մատերիալիստական դիրքերում: Նրա կարծիքով, օրգանիզմի հատկություններում բոլոր, նույնիսկ աննշան շեղումները առաջանում են արտաքին պայմանների փոփոխությունների հետ կապված, օրոշակի նյութական պատճառներից:

Սակայն փոփոխականության կոնկրետ պատճառների մասին, Դարվինը տարբերում է հետևյալ հիմնական դորժոնները՝ կյանքի պայմանների ուղղակի և անուղղակի ազդեցությունը, օրգանների վարժեցումը կամ չվարժեցումը, խաչաձևումը, կոսելյատիվ փոփոխությունները և այլն: Նա առանձնահատուկ ուշադրություն է նվիրել սննդին և հայտնել է այն միտքը, որ սնունդը անմիջական ազդեցություն ունի ցեղի առանձնահատկությունների, նրա չափերի մեծացման ու փոքրացման վրա:

Դարվինի ուսմունքը անհատականության կլիներ, առանց նրա մեջ անհատական կյանքի ընթացքում ծնողների կրած փոփոխությունները հաշվի առնելու: Դարվինը նշում է, որ ընտրությունը փիկցիայի կվերածվի, եթե հաշվի չառնվի այն հանգամանքը, որ նոր հատկանիշի հանդես գալու ժամանակ, ինչպիսին էլ որ լինի նրա բնույթը, նրան սովորաբար հատուկ է սերունդներին ժառանգաբար անցնելը: «... Ընդհանուր առմամբ, — գրում է Դարվինը, — կարելի է ասել, որ հատկանիշների ժառանգումը կանոն է, իսկ չժառանգումը՝ բացառություն»¹:

Այդ ուսմունքի համաձայն, կենսապայմաններում անհատի փոփոխականությունը օրոշում է սերնդի, գրանով իսկ ցեղի փոփոխականության ուղղությունը: Եթե նախնիների ու սերունդների և յուրաքանչյուր հետագա սերնդի փոփոխությունները բոլորովին կապված չլինեին իրար հետ, անհատական և ցեղի փոփոխությունները կլինեին միանգամայն ինքնուրույն և իրարից անկախ, հետևապես ընտրության սակագծադորժական դորժոններությունը այս կամ այն սերնդի անհատների պահպանման ճանապարհով բոլորովին կլիկվիդացվեր հաջորդ սերունդներում: Մինչդեռ օրգանիզմների հատկությունները շարունակում են փոխվել նույն ուղղությամբ, որով նրանք փոխվել էին սկզբում: Որոշակի պայմաններում անհատական շեղումների յուրահատկությունները օրոշում են սերնդի հետագա շեղումների ուղղությունը նման պայմաններում:

Այսպիսով, ըստ Դարվինի, տեսականապես պրոցեսն իրականանում է նոր օգտակար հատկանիշների և հատկությունների՝ սերնդից սերունդ անցիմանական կուտակմամբ: Նրա համար միանգամայն ակնհայտ էր, որ առանց անհատական կյանքի պայմանների ազդեցությամբ ձևաքրեքած փոփոխությունների ժառանգման անհնարին է սերունդներում հաջորդա-

¹ Վ. Լարսոն, Приученные животные и возделанные растения, соч., т. III, Изд. Поповой, 1900, стр. 28.

կանութիւնը, անհնարին է սերունդներէ կողմից իրենց ծնողներէ և նախնայրերէ հարմարօգտական փոփոխութիւններէ և հնարափորութիւններէ հարստութեան օգտագործումը: Այդ միտքը թափանցում է Դարձիւնի ամբողջ տեսութիւնը և յայտ սփռում նրա ուսմանքի հիմքում ընկած ընտրութեան գործունեութեան վրայ:

Ինչպե՞ս տեսնում ենք, արտաքին պայմաններէ դերի և օրգանիզմներէ կողմից ձևաք բերված փոփոխութիւններէ ժառանգման դերի ճանաչումը կազմում է Դարձիւնյան ընտրութեան ուսմանքի հիմքը:

Դարձիւնը ապացուցել է, որ միայն փոփոխականութեան և ժառանգականութեան գործոնները բաժարար չեն օրգանական աշխարհի զարգացման պրոցեսը հասկանալու համար:

Դոյութեան ունեցող բազմազանութիւնը չի կարելի վերագրել միայն փոփոխված արտաքին պայմաններին, կամ որեւէ օրգանի վարժեցմանն ու չվարժեցմանը:

Բուսաբույծներէ և կենդանաբույծներէ ամենօրյա փորձը, ինչպե՞ս նաև կուլտուրական ձևերի ձևափոխման պրակտիկան ցույց են տալիս, որ նոր հատկութիւններէ ստացւածն ու կուտակման և հնէրի ու մեղացման մեջ հակայական ստեղծագործական դեր է խաղում արհեստական ընտրութիւնը:

Կուլտուրական ձևերի ձևափոխման գործում արհեստական ընտրութեան ստեղծագործական դերի մասին վկայող բազմաթիւ ուղղակի և անուղղակի ապացույցներ կան: Թեկուզ հիշենք ընտանի կենդանիներէ ու կուլտուրական բույսերի փոփոխականութիւնը և կատարելապէս գործումը մեր աչքի առջև:

Դարձիւնը նշում է, որ այդ երեք կարեւոր գործոններէ՝ փոփոխականութեան, ժառանգականութեան և ընտրութեան մեջ և դոյութեան ունի անխզելի կապ, բոտ էութեան, նրանք ձուլվում են օրգանիզմներէ պատմական զարգացման պրոցեսում:

Լուծելով ընտանի կենդանիներէ և կուլտուրական բույսերի էվոլյուցիայի հիմնական գործոններէ պրոբլեմը, Դարձիւնը իր առջև խնդիր դրեց պարզարանել՝ կիրառելի է արդյոք ընտրութեան սկզբունքը բնութեան մեջ:

Բնութեան ամբողջ բազմազանութիւնը, անհատական տարրերութիւնները Դարձիւնին համոզեցին, որ օրգանական աշխարհի էվոլյուցիայի հիմնական գործոնը անընդհատ գործող բնական ընտրութեանն է:

Ի հակադրութեան իր ժամանակաշրջանում իշխող տեսակետներէ, Դարձիւնը հակայական նշութի հիման վրայ ապացուցեց, որ բնական ընտրութեանը, պահպանելով հարմարված օրգանիզմները և շարքից հանելով չհարմարվածները, փոփոխականութեանը տանում է հարմարօգտականութեան կուտակման ուղղութեամբ: Նա հանդիսանում է տեսակներէ ստեղծման և նրանց նպատակահարմար հարմարօգտականութեան պրոցես: Ըստ Դարձիւնի՝ բնական ընտրութեանը երբեք չի կարող տանել բացարձակ կատարելութեան: Նրա գործունեութեան արդյունքը բնութեան մեջ եղած, ժամանակով և տեղով պայմանավորված հարաբերական նպատակահարմարութիւնն է:

Այսպիսով, Դարվինը զինաթափեց թելեոլոգիան նրանով, որ առանց ժխտելու նպատակահարմարություն փաստը օրգանական աշխարհում, հայտնաբերեց այն օրենքը, որի շնորհիվ նպատակահարմարությունը պատմականորեն իրականանում և կրում է հարաբերական բնույթ:

Դարվինի ուսմունքում բնական ընտրությունը ներկայացվում է, որպես մի պրոցես, որն իր մեջ առնում է երկու հակադիր, բայց իրար հետ փոխադարձ կապի մեջ գտնվող կողմեր՝ 1. նպատակահարմար ձևերի գերապրում և մեծ սերնդի ապահովում, 2. Ոչ նպատակահարմար շեղումներով ձևերի հեռացում: Այլ կերպ ասած, ըստ Դարվինի, բնական ընտրությունը ոչ այլ ինչ է, բայց եթե ոչ օգտակար շեղումներով անհատների ընտրողական գերապրումը և առավելապես բազմացումը:

Այսպիսով, պատմականորեն անընդհատ դործող բնական ընտրության արդյունքը, ըստ Դարվինի ուսմունքի, հանդիսանում է օրգանական աշխարհի կատարելագործումը, առաջադիմությունը, ինչպես նաև օրգանական աշխարհում դոյություն ունեցող բազմազանությունը:

Հաղթահարելով իրեն նախորդող մետաֆիզիկական շրջանի բիոլոգիական գիտությունն սահմանափակվածությունը, որի համաձայն տեսակները իրրև առանձին-առանձին, իրարից անկախ ստեղծված, չէին կարող առաջանալ մեկը մյուսից, Դարվինը իր էվոլյուցիան ուսմունքում բացատրեց տեսակների պատմականորեն առաջացումը միմյանցից: Նա հաստատեց, որ յուրաքանչյուր տեսակի էվոլյուցիան ուղեկցվում է հատկանիշների անջատմամբ՝ գիվերգենցիայով:

Դիվերգենցիայի տեսությունը մեջ արտացոլվում է օրգանական բնությունը դարգացման պատմականությունը: Նա հաստատում է, որ բնությունը մեջ դոյություն ունեցող բազմազանությունը պայմանավորված է կենսապայմաններում ձևաբերած հատկությունների ժառանգման օրենքի դործունեությունը շնորհիվ, մի տեսակի հատկանիշները տարբեր ուղղություններով անջատմամբ:

Բնական ընտրությունը երկարատև էվոլյուցիայի պրոցեսում հին տեսակը աանում է աշխատեսակների և դրանցից էլ՝ նոր տեսակների առաջացմանը:

Այսպիսով, Դարվինը հայտնաբերել է կենդանի բնությունը դարգացման օրյեկտիվ օրենքները, որոնց դործունեությունը ապահովվում է օրգանական աշխարհի առաջադիմությունը: Նա իր այդ ծառայությունը համար բարձր գնահատական է ստացել մարքսիզմ-լենինիզմի կուսիկների կողմից:

Լենինը, բարձր գնահատելով Դարվինի ուսմունքը, գրում էր, «... Դարվինը վերջ դրեց այն հայացքին, ըստ որի կենդանիների և բույսերի տեսակները ոչ մի բանով կապակցված չեն միմյանց հետ, պատահական են, ժառանգաբար ստեղծված և անփոփոխելի, և առաջին անգամ միանգամայն գիտական հոգի վրա դրեց բիոլոգիան՝ սահմանելով տեսակների փոփոխությունը և նրանց հաջորդականությունը...»¹:

Չնայած Դարվինի կողմից բիոլոգիայում կատարված այդ մեծ հեղաշրջմանը, պետք է ասել, որ նա իր ուշադրությունը կենտրոնացնելով

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, Քաղաքական գրականությունը պետական հրատարակչություն, 1941, էջ 160:

գլխավորապես տեսակների փոփոխության փաստի հաստատման վրա, այդ պրոցեսի պատճառների հարցում չի խորացել: Տվյալ հարցը նրա ուսմունքում թողնվել է մշուշում, որի հետևանքով էլ անտեսվել է այդ պրոցեսի գեղափոխումը:

Դուրս գալով անգլիական բուրժուական միջավայրից, Դարվինը իր վրա կրել է նրա սահմանափակվածությունը կնիքը: Հայտնի է, որ բանավորական շարժման դեմ, որպես պայքարի զենքերից մեկը, բուրժուազիան օգտագործել է այն ժամանակ լայնորեն տարածված քաղաքատնտեսական և փիլիսոփայական մի շարք սեակցիոն պատկերացումներ: Դրանք են՝ ազատ մրցակցության, գոյության կռիվի, գերընտելչության, ամենահարմարվածների գերապրման և չհարմարվածների ոչնչացման գաղափարները (Ադամ Սմիթ, Մալթուս, Թ. Հոբս և ուրիշներ):

Այդ սեակցիոն տեսություններից Դարվինը հատկապես ուժեղ ազդվել է մալթուսականությունից և այն անփնադատորեն օգտագործել է բնության պատմական դարգացումը բացատրելիս: Բնական է, որ դա Դարվինին օրգանիզմների միջև փոխհարաբերությունները պարզաբանելու փորձի ժամանակ բերել է մի ամբողջ շարք սխալների: Այդ սեակցիոն տեսությունները անդրադարձել են նրա մտածողության վրա, որի հետևանքով նա մնացել է տարերային գիալեկտիկայի գիրքերում:

Նա չի կարողացել բարձրանալ գիալեկտիկական մատերիալիզմի գիտակցորեն տիրապետմանը և հասնել բնության սեալ պատկերի լրիվ արտացոլմանը:

Դարվինի ուսմունքի հիմնական սխալները, որոնք նրան խանգարել են բարձրանալու էվոլյուցիոն պրոցեսի վերջնական հասկացողության ստիճանին, վերաբերում են գլխավորապես օրգանական աշխարհի զարգացման պատճառների բացատրությանը: Դարվինի ուսմունքի համաձայն, բնական ընտրության անհրաժեշտ գործունեությունը բխում է բնության մեջ գործող գերընտելչությունից և գոյության կռիվից:

Տեսակատաջացման պրոցեսի հիմքում ընդունելով ներտեսակային պայքարը, Դարվինը գտնում է, որ վերջինս տանում է գեղի բնական ընտրության գործունեությունը, որտեղ հարմարվածների ապրելու և չհարմարվածների ոչնչանալու պրոցեսն ընթանում է գիվերգենցիայի՝ հատկանիշների անջատման ճանապարհով, որը սկզբում տանում է գեղի աշխատեսականների, իսկ հետո՝ տեսակների առաջացումը:

Մարքսը էնգելսին դրամ նամակներից մեկում շատ դիպուկ նշում է, որ Դարվինի մոտ կենդանական աշխարհը հանդես է գալիս մարդկային հասարակություն ձևով, որ բուսական և կենդանական աշխարհում նա ճանաչում է իր անգլիական հասարակությունը, նրա աշխատանքի բաժանմամբ, մրցակցությամբ, նոր շուկաների բացմամբ, պայտեկրով և մալթուսյան գոյության կռիվով:

Էնգելսը «Բնության գիալեկտիկա»-ում նշում է, որ «գոյության կռիվի վերաբերյալ Դարվինի ամբողջ ուսմունքը, բոլորի պատերազմը բոլորի դեմ՝ հորրայան ուսմունքի և մրցակցության վերաբերյալ բուրժուական

տնտեսագիտական ուսմունքի, ինչպես նաև ազգայնակալական մալխուսյան թեորիայի սոսկական փոխադրումն է հասարակությունից կենդանի բնակչության բնագավառը¹։

Մարքսիզմի կրթիկները ցույց են տվել, որ Մալխուսի օրենքը ոչ միայն չի համապատասխանում Դարվինի ուսմունքին, այլև յիշվին հակասում է նրա մատերիալիստական կորիզին, քանի որ օրգանական աշխարհի զարգացման պրոցեսը, որի բացատրությունն էլ նվիրված է նրա ուսմունքը, բնթանում է մալխուսականությանից աճական Դարվինը չկարողացավ ազատվել այդ սեռիցիսն տեսություն ազդեցությունից և դիմեց նրա օգնությունը։

Էվոլյուցիայի պրոցեսում դիտվոր տեղը տալով բնական բնարությունը, Դարվինը անհետևողական է գտնվել նաև անհատական հարմարողական փոփոխությունների առաջացման մեջ միջավայրի դերի բացատրություն գործում։ Փոփոխությունների ձևավորման հարցի բացատրություն կապակցությունումը նրա կողմից առաջ են քաշվում օրգանիզմի բնույթի և միջավայրի բնույթի գաղափարները, որոնց մեկնաբանման ժամանակ Դարվինը ճանապարհից շեղվում է։ Նրա կարծիքով, միջավայրը կայծի դեր է խաղում օրգանիզմի փոփոխություն գործում, այն բացավառվում է օրգանիզմի ներքին օրինաչափությունների համաձայն։

Ճիշտ է, Դարվինի այս տեսակետը պարունակում է ճշմարտություն որոշ մասնիկ, այն իմաստով, որ օրգանիզմի բնույթը, որն առաջանում և ձևավորվում է ամբողջ ֆիլոգենեզի բնթացքում, բաղմապիսի պայմանների ազդեցություն ներքո, ծածկված է զգալի կոնսերվատիզմով՝ իր վրա ազդող պատահական պայմանների նկատմամբ։ Սակայն Դարվինը, այս հարցի լուծմանը մոտենալով միակողմանի, միջավայրի պայմանների դերն իջեցրել է միայն փոփոխությունները արթնացնող կայծի դերի, դրանով էլ բացատրվում է այն հանդամանքը, որ Դարվինը իր գործունեությունն սկզբում դժվարացել է կողմնորոշվել, թե ինչպիսի ինքնաբերականությամբ էլ ծածկված լինի օրգանիզմը միջավայրի նկատմամբ, միևնույն է, հատկապես արտաքին միջավայրն է, որ բնդունակ է վճռական դեր խաղալու օրգանիզմների զարգացման փոփոխությունն ազդությունումը։

Դարվինը սխալվել է նաև փոփոխությունները որոշակի և անորոշ խմբերի բաժանելիս։ Այստեղ նա հաշվի է առել օրգանիզմների վրա կենսատալանների ազդակի և անսղղակի ազդեցությունները։

Ըստ Դարվինի, որոշակի փոփոխությունները ազդելիստ ևն ազդող պայմաններին մեծ թվով անհատների համար, իսկ անորոշ փոփոխությունները համապատասխանում ևն օրգանիզմների կյանքի մթանավոր պայմաններին։ Նույն հարաբերական պայմանները փոփոխականությունն առաջին ձևի ժամանակ առաջացնում ևն մեկ ազդությունումը բնթացող փոփոխություններ, երկրորդ դեպքում՝ տարբեր ազդություններով։

Փոփոխությունների աշղպիսի դատակարգման համար ոչ մի հիմք չկա որովհետեւ բոլոր փոփոխություններն, ունենալով իրենց որոշակի պատճառները, որոշակի են։ Քանի որ գոյություն չունեն ինչպես բացարձակ միանման պայմաններ, այնպես էլ բացարձակ միանման օրգանիզմներ, հետևապես

¹ Չ. Է. Ն. Է. Լ. Լ. Բնությունի դիալեկտիկա, 1950, էջ 347։

հարաբերական նման պայմաններում առաջացած բոլոր փոփոխություններն այս կամ այն չափով տարբեր են:

Դարվիների այս սխալը հետազոտում զենք է հանդիսացել մորգանիստների ձեռքին՝ իրենց մասնագիտական «մուտացիաների» և չմասնագիտող «մոդիֆիկացիաների» մասին կեղծ ուսմունքը քարոզելիս:

Դարվիներ, լինելով համոզված մատերիալիստ և շատ հարցերի մոտենալով տարերային գիտելիության գիրքերից, դարգացման պրոցեսի որոշ կողմերը ճիշտ է հասկացել և մեկնաբանել, սակայն զեկավարվել է սահուն էվոլյուցիոնիզմով: Այդ է պատճառը, որ դարգացման պրոցեսի բնույթի մեկնաբանման գործում մնացել է կես ճանապարհին: Նա չի բարձրացել օրգանական աշխարհի դարգացման պրոցեսում քանակական և որակական փոփոխությունների գիտելիության հասկացողության աստիճանին:

Ճիշտ է, ի տարբերության իր նախորդների, Դարվիները քնդունել և էվոլյուցիայում տեղ է տվել երկու տիպի փոփոխությունների՝ քանակական և որակական, սակայն նա հրաժարվել է ուժեղ արմատական սեռյուցիոն փոփոխություններից՝ թռչններից, մի բան, որ նրա տեսության համար ճակատագրական է հանդիսացել:

Ընտրությանը վերադրելով փոքր, աննշան շեղումների բնոյդիում, նրա ոլորտից Դարվիները բացառել է խիստ, ուժեղ փոփոխությունների գործունեությունը:

Այսպիսով, Դարվիներ իր տեսության մեջ բացատրել է դարգացման պրոցեսի միայն էվոլյուցիոն կողմը, առանց հաշվի առնելու նրա մյուս անհրաժեշտ՝ սեռյուցիոն կողմը:

Դարվիների այս սխալը առաջին հերթին անդրադարձել է տեսականաֆազացման պրոցեսի՝ նրա բացատրության վրա: Դա նրան զրկել է նաև տեսակը, որպես սեռ զոյության ունեցող կատեգորիա պատկերացնելու և հասկանալու հնարավորությանից:

Տեսականաֆազացման պրոցեսում վճռական դերը նրա կողմից վերադրվել է անհատին, իսկ տեսակի դերը թերադնահատվել է: Բնչպես տեսում ենք, Դարվիներ չկարողացավ ազատվել իր մամանակ իշխող սեռից իր իդեոլոգիայից, այդ պատճառով էլ նա սահմանափակվեց օրգանական աշխարհի դարգացման փաստի հաստատմամբ, իսկ այդ պրոցեսի նպատակադիր զեկավարման հարցը նրա ուսմունքում մնաց չշաշտափած: Այստեղից էլ պատահական չէ բնությունը ստեղծագործորեն վերափոխելու գործում մարդու «անգորության» մասին Դարվիների պեսիմիզմը:

Չնայած այս բոլորին, չպետք է մոռանալ, որ Դարվիների ուսմունքի մատերիալիստական կորիզը առողջ է և մեծ հեղաշրջում է առաջացրել բխողդիայի ու փիլիսոփայության պատմության մեջ: Դարվիներիզմը հանդիսացել է մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների բնագիտական հայացքների հիմքը և զգալիորեն ամրացրել է գիտելիության մատերիալիզմի գիրքերը:

Հետգարվիյան շրջանում Դարվիների ուսմունքի մատերիալիստական միջուկը դարգացվեց առաջադիմական մտքի բոլոր ներկայացուցիչների կողմից, այն հարստացվեց նոր տվյալներով և կազմեց մամանակակից գիտական բխողդիայի հիմքը: